«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

/09.09.2022թ փոփոխություններ/

ԵՐԵՎԱՆ 2022

Քննարկված և հաստատված է
« Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և
արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2022թ. սեպտեմբերի 9-ի N3 որոշմամբ:

ՀՀ ԿԳՄՄՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ » ՊՈԱԿ-Ի
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. 2021թվականի ապրիլի 14 -ին «Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի N14 որոշմամբ հաստատված Քոլեջի ներքին կարգապահական կանոններում կատարել փոփոխություն:

2. Նեքին կարգապահական կանոնների 9-րդ բաժնի , 14-րդ կետի ՝ (ա), (բ) , (գ), ենթակետերը խմբագրել, ավելացնել նաև (ե) , (զ) ենթակաետերը հետևյալ բովանդակությամբ.

ա)Կիսամյակի ընթացքում դասերից 50 և ավել ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում, քոլեջի ներքին կարգապահական կանոնները խախտելու, դասապրոցեսը միտումնավոր խանգարելու դեպքում Քոլեջի տնօրենի կողմից տվյալ ուսանողին ներկայացվում է նախազգուշացում, որի մասին գրավոր ձևով տեղեկացվում է ուսանողին /անչափահաս ուսանողի ծնողին/:

բ)Կիսամյակի ընթացքում դասերից 80 և ավել ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում Քոլեջի տնօրենի կողմից տվյալ ուսանողին ներկայացվում է նկատողություն, որի մասին գրավոր ձևով տեղեկացվում է ուսանողին /անչափահաս ուսանողի ծնողին/:

գ)Կիսամյակի ընթացքում դասերից 120 և ավել ակադեմիական ժամի անհարգելի բացակայության դեպքում Քոլեջի տնօրենի հրամանով հայտարարվում է խիստ նկատողություն, որի մասին գրավոր ձևով տեղեկացվում է ուսանողին /անչափահաս ուսանողի ծնողին/:

ե) Կիասամյակի ընթացքում միչև 120 ժամ ուսանողի կողմից բացակայության դեպքում այն հարգելի կարող է համարվել եթե ուսանողը ներկայացնում է համապատասխան բժշկական տեղեկանք այդ ժամանակաշրջանում հիվանդ լինելու մասին:

զ) Կիասամյակի ընթացքում մինչև 40 ժամ կարող է համարվել հարգելի եթե՝ ուսանողը մասնակցել է միջազգային և հանրապետական մրցույթների, փառատոնների համերգային միջոցառումների:

3. Նեքին կարգապահական կանոնների 9-րդ բաժնի , 16-րդ կետի (ե), (զ) ենթակետերը փոփոխել և խմբագրել հետևայլ բովանդակությամբ.

ե/ ուսումնական կիսամյակի ընթացքում 200 ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում,

զ/ ուսումնական տարվա ընթացքում 240 ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում:

4. Նեքին կարգապահական կանոնների 3-րդ բաժնում ավելացնել նոր 21 ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

1.Քոլեջի զարգացման գործում ինչպես նաև ՀՀ -ում մշակույթային կյանքի, կրթության ոլորտում ներդրած ավանդի համար կարող է պարգևատրել անհատների, կազմակերպությունների (քոլեջի՝ շնորհակալագիր, պատվոգիր, կրծքանշան , հուշամեդալ)

5. Նեքին կարգապահական կանոնների 8-րդ բաժնի , 1-ին կետի (գ) ենթակետը և 2-րդ կետի (գ) ենթակետը փոփոխել և խմբագրել հետևայլ բովանդակությամբ, ինչպես նաև 1-ին և 2-րդ կետերում ավելացնել նոր՝ (ը) և (ե) ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

1. գ/ քոլեջի հուշամեդալով պարգևատրում
2. գ/ քոլեջի հուշամեդալով պարգևատրում:

1. ը/ քոլեջի կրծքանշանով և շնորհակալագրով , կրծքանշանով և պատվոգրով պարգևատրում,
2. ե/ քոլեջի կրծքանշանով և շնորհակալագրով , կրծքանշանով և պատվոգրով պարգևատրում,